ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 043

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.01998 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 3-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 23.07.2015թվականի N 828-Ն, 29.12.2011 թվականի N 1918-Ն և 29.12.2005թվականի N 2387-Ն որոշումները՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող բնակավայրերի նշանակության 0.01998 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-012-0011-, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել բնակելի կառուցապատման գործառնական դասակարգման:

2. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող բնակավայրերի նշանակության 0.01998 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-012-0011-, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

3. Վերը նշված հողամասին տալ հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Արփի 4-րդ փողոց, թիվ 10:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**